

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

**ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՇՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՆՊԱՍՏՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ**

**ԺԹ. 00.01.- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության
տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու՝
Մուսաննա Միհրանի Փիլոսյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** հոգեբանական գիտությունների դոկտոր՝
Մամվել Մուրենի Խուրոյան

հոգեբանական գիտությունների թեկնածու՝
Միրանուշ Աշոտի Անտոնյան

**Առաջատար
կազմակերպություն՝** **ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային
կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. մայիսի 21-ին, ժամը 12⁰⁰-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՎ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ. ապրիլի 11-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝



Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից մարդու գործունեության ոլորտը դարձել է շատ ավելի ակտիվ, շատ ավելի բազմակողմանի, որտեղ մարդկային հարաբերությունների, գործունեության արդյունավետության, կազմակերպման, կառավարման խնդիրների կենտրոնում անձի սոցիալական կայացման, հատկապես սոցիալական իրականության մեջ հուզական, ճանաչողական, հաղորդակցման ոլորտների կարգավորման առանցքում բնավորությունը կարևոր գործոն է դառնում: Բնավորության գծերի միջին արտահայտվածության դեպքում դրանք ադապտիվ գործառույթ ունեն, սակայն եթե այդ գծերը շեշտվում են, փոխվում է անձի կառուցվածքը, երբեմն էլ մարդու ողջ կյանքը: Դառնալով առաջատար՝ բնավորության շեշտված գծերը խիստ ուղղորդող դիրքորոշումներ են ստեղծում, ինչը հարվածի տակ է դնում անձի ադապտիվությանը:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է բազմաբնույթ փոփոխություններով: Այսօր առավել արագ, քան երբևէ, փոփոխվում են սոցիալական իրականությունը՝ ծառայությունները, բնակչության տնտեսական իրավիճակը, տեղեկատվությունը: Նման պայմաններում անձի բնավորության գծերը փոխում են նրա գործունեության ընդհանուր պատկերը և միջանձնային հարաբերությունների դրսևորման ձևերը: Առանցքային դեր կատարելով անձնային դրսևորումներում՝ բնավորության շեշտված գծերը կարող են փոխել անձի ողջ նկարագիրը, երբեմն էլ հիմք հանդիսանալ շեղվող վարքի տարաբնույթ ձևերի և անձնային որոշ խանգարումների, հատկապես պսիխոպաթիայի զարգացման համար:

Վերջին տարիներին բնավորության առանձնահատկությունների, բնավորության գծերի դասակարգման, բնավորության շեշտվածության, շեշտվածության և առանձին անձնային հատկությունների փոխհարաբերության վերաբերյալ հետազոտություններ են կատարվել: Բնավորության շեշտվածության և անձի հուզակամային ոլորտի փոխհարաբերության խնդրին անդրադարձել են Վ. Լեոնիարդը (1964), Ա. Լիչկոն (1977), Ե. Ա. Ալեքսեևան և Վ. Վիբոյշիկը (2002), Յու. Գիպպենրեյտերը և Վ. Ռոմանովան (2012), Դ. Վ. Վոլդինան և Տ. Վ. Օզորդովան (2013): Բնավորության շեշտվածության և ինտելեկտի, ռեֆլեքսիվության փոխազդեցության խնդրին է անդրադարձել Ս. Փիլոսյանը (2013): Բնավորության շեշտվածության և

ինքնագնահատականի փոխհարաբերությանն են անդրադարձել Ա. Լիչկոն (1977), Յու. Գիպպենրեյտերը և Վ. Ռոմանովան (2012), Ա. Ա. Սմագան և Տ. Ն. Բզերգինան (2011): Բնավորության շեշտվածության տիպերի և ինքնակարգավորման հիմնահարցն են ուսումնասիրել Վ. Ի. Ա. Սամոխվալովան (2013), Բ. Գիպպենրեյտերը և Վ. Ռոմանովան (2012), Ե. Ա. Ալեքսեևան և Ի. Վ. Վիբոյշիկը (2002), Ա. Լիչկոն (1977), Կ. Լեոնհարդը (1964), Պ. Վ. Վոլկովը (2004): Ա. Լիչկոն (1877) և Վ. Վարդանյանը (1999) իրենց աշխատանքներում անդրադարձել են ապրումակցման և բնավորության շեշտվածության փոխհարաբերության խնդիրներին: Ե. Ա. Կովալենկոն (2007) ուսումնասիրել է շփվողականության և բնավորության շեշտվածության փոխհարաբերությունը: Յա. Ն. Նիկոլայենկոն (2009), Օ. Կոբզևան (2006), Ալեքսեևան և Վիբոյշիկը (2002) իրենց աշխատանքներում անդրադարձել են ագրեսիվության և բնավորության շեշտվածության փոխազդեցության խնդրին: Յու. Գիպպենրեյտերը և Վ. Յա. Ռոմանովան (2012) ուսումնասիրել են բնավորության տիպերի համատեղելիության, հարաբերությունների կառուցման ու կոնֆլիկտների լուծման խնդիրները, բնավորության յուրաքանչյուր տիպի ճիշտ դաստիարակության առանձնահատկությունները: Բնավորության շեշտվածության և կոնֆլիկտային իրավիճակներից դուրս գալու ոճերի ընտրության փոխհարաբերության խնդրին են անդրադարձել Ս. Ն. Շիլովան (2013), Լ. Ի. Ալիևան (2012):

Գիտական գրականության մեջ նշված ուսումնասիրությունները, հիմնականում, կոմպլեքսային են և շեշտվածության յուրաքանչյուր տիպի հիմքում ընկած առավել կարևոր գործոնների անձի կառույցների, անհատական և անձնային հատկությունների համակարգային ուսումնասիրություն չի կատարված: Այնինչ, դրանց փոխհարաբերության և առավել նկատելի կապերի բացահայտումը հնարավորություն կտա վեր հանել բնավորության շեշտվածության տիպերի հիմքում ընկած գործոնները և դրանց կարգավորման ուղիներ մշակել:

Ուսումնասիրության նպատակն է բնավորության շեշտվածության ձևավորմանը նպաստող հոգեբանական գործոնների բացահայտումը:

Հետազոտության օբյեկտը բնավորության շեշտվածությունն է:

Ուսումնասիրության առարկան բնավորության շեշտվածության ձևավորմանը նպաստող հոգեբանական գործոններն են:

Հետազոտության վարկածը. Ենթադրվում է, որ.

1. Բնավորության շեշտվածության հիմքում ընկած են անհավասարակշիռ նյարդային համակարգը և կասկածամտություն, ագրեսիվություն, էսասիրություն, ենթարկվողականություն, կախյալություն, լիդերություն, մրցակցության հակվածություն անձնային հատկությունները:

2. Բնավորության շեշտվածության բոլոր տիպերի մոտ առկա են ինքնակառավարման մեկ կամ մի քանի բացասական փոփոխությունների ենթարկված բաղադրամասեր և անձնային հատկություններ:

Ուսումնասիրության նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել գիտական գրականության մեջ խնդրին վերաբերվող տեսական և մեթոդական մոտեցումները:

2. Ուսումնասիրել նյարդային համակարգի տիպի և բնավորության շեշտվածության փոխալայմանավորվածությունը:

3. Ուսումնասիրել բնավորության շեշտվածության և անձնային կառույցների փոխազդեցությունը:

4. Վեր հանել բնավորության շեշտվածության և անձնային հատկությունների փոխազդեցության առանձնահատկությունները:

5. Բացահայտել բնավորության շեշտվածության տիպերին բնորոշ ինքնակառավարման առանձնահատկությունները:

6. Բացահայտել բնավորության շեշտվածության ձևավորմանը նպաստող գործոնները:

Հետազոտության ընտրակազմը՝ ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիա, Կուլտուրա, Մաթեմատիկա, Ֆիզիկա և ինֆորմատիկա ֆակուլտետների առաջին և երկրորդ կուրսերի 74 ուսանող:

Հետազոտության համար **տեսամեթոդական հիմք են ծառայել** Լ. Ֆոն Բերտալանֆիի (1969), Բ. Ֆ. Լոմովի (1984), Բ. Գ. Անանևի (2001) կողմից մշակված համակարգային մոտեցումը, Անձի ձևավորման և զարգացման Բ. Գ. Անանևի տեսությունը, Պ. Կ. Անոխինի Կառուցվածքային-գործառնության մոտեցումը, Գ. Օլպորտի, Հ. Այզենկի և Ռ. Կետտելի անձի տեսությունները, Ա. Լիչկոյի և Կ. Լեոնհարդի բնավորության շեշտվածության մոտեցումները, դետերմինիզմի և զարգացման ընդհանուր գիտական սկզբունքները:

Հետազոտության մեթոդները ու դրանց ընտրության հիմնավորումը: Ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխան կիրառվել են գիտափորձի և թեստավորման մեթոդները, ընդգրկելով անձի կառույցները, անհատական և անձնային հատկությունները: Ելնելով համակարգային մոտեցման

պահանջներից՝ ընտրվել է բնավորության շեշտվածության, անհատական, անձնային, սոցիալ-հոգեբանական հատկությունների ուսումնասիրության ստանդարտացված մեթոդիկաների համախումբ

1. Գ. Շմիշեկի «Բնավորության շեշտվածության որոշման» թեստը:
2. «Անձնավորության հատկությունների շեշտածություն և նյարդա-հոգեկան անկայունություն» մեթոդիկան (ըստ Ա. Ա. Կարելինի):
3. Կ. Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքագծի նախատրամադրվածության ախտորոշման» մեթոդիկան:
4. Չ. Օսգուդի «Անձնային դիֆերենցիալ» հարցաթերթիկը:
5. Ջ. Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակներ» մեթոդիկան՝ ինտելեկտի հետազոտման նպատակով:
6. «Անձի հինգ-գործոնային մոդելի գնահատում» սանդղակը՝ ըստ Ս. Ջ. Սիֆրթի:
7. Ն. Մ. Պեյսախովի «Ինքնակառավարման ընդունակություն» մեթոդիկան:
8. Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի «Սոցիալ-հոգեբանական ադապտացվածության» մեթոդիկան:
9. Տ. Լիրիի «Միջանձնային հարաբերությունների ախտորոշում» մեթոդիկան:
10. Ի. Մ. Յուսուպովայի «Ապրումակցման միտումների մակարդակի որոշում» թեստը:
11. «Մենակության հակվածություն» մեթոդիկան (ըստ Ե. Պ. Իլինի):
12. Մ. Սնայդերի «Հաղորդակցման ընթացքում ինքնավերահսկման գնահատման» թեստը:
13. «Ինքնագնահատման մակարդակի որոշում» թեստը (ըստ Լ. Դ. Ստոյարենկոյի):
14. Ն. Ն. Օրբովայի «Կամքի ուժի ինքնագնահատում» թեստը:
15. Վ. Մ. Ռուսալովի «Հուզականության ախտորոշում» մեթոդիկան:
16. Վ. Ն. Ռայխովսկու «Շփվողականության մակարդակի որոշման» թեստը:
17. «Ինքնուրույնության աստիճանի որոշում» թեստը (ըստ Ա. Ա. Կարելինի):
18. Ա. Վ. Կարպովի «Օնտոգենետիկ ռեֆլեքսիայի ինքնագնահատում» թեստը:

19. «Նյարդային համակարգի առանձնահատկությունների ուսումնասիրում» մեթոդիկան (ըստ Ն. Ֆ. Գրեբենի):

Հետազոտության գիտական նորույթը: Կատարվել է բնավորության շեշտվածության, անհատական, անձնային հատկությունների և անձնային կառույցների համակարգային ուսումնասիրություն: Բացահայտվել են յուրաքանչյուր տիպի հիմքում ընկած գործոնները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Համակարգային բնույթ կրող գիտափորձարարական ուսումնասիրությունների արդյունքները կարող են ընդլայնել բնավորության շեշտվածության հոգեբանական գործոնների մասին գիտելիքների շրջանակը՝ անհատական, անձնային այն հատկությունները, որոնց փոխազդեցության դեպքում բնավորության շեշտվածություն է ձևավորվում: Հետազոտության ընթացքում ստացված տվյալները կարող են ընդլայնել բնավորության տեսության շրջանակները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Գիտափորձարարական ուսումնասիրության արդյունքներն ու եզրակացությունները կարող են կիրառվել «Ընդհանուր հոգեբանություն», «Անձի հոգեբանություն» և «Տարիքային հոգեբանություն» առարկաների ծրագրերում և ուսումնական նյութերում: «Բնավորության շեշտվածություն ունեցող 18-20 տարեկան անձանց հոգեբանական վարժանքի» մեր առաջարկած ծրագիրը կարող է կիրառվել պատանիների բնավորության շեշտվածության որոշ տեսակների շտկման նպատակով:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Բնավորության շեշտվածության յուրաքանչյուր տիպ իր ձևավորմանը նպաստող հոգեբանական գործոնների հիմքում ներառում է անհատական, անձնային հատկությունների իր «ընտրանին» և ունի անձնային կառույցների դրսևորման իր յուրահատկությունն ու շեշտադրումը:

2. Բնավորության շեշտվածություններին բնութագրական են հուզականային ոլորտի կառավարման դժվարություններ, որոնք նպաստում են այդ տիպերին բնորոշ բացասական հատկությունների առավել կայուն պահպանմանը:

3. Բնավորության շեշտվածության տարբեր տիպերին բնութագրական են հաղորդակցման ոլորտի տարբեր դժվարություններ:

4. Էմոտիվ, հոգեապթենիկ և տազնապային տիպերի շտկման գործընթացը դժվար է ընթանում:

5. Պեղանտ տիպի մոտ փոփոխություններ չի դրսևորվում, որը բացատրվում է այդ տիպին բնորոշ նյարդային համակարգի անհավասարակշռությամբ, հուզական անկառավարելիությամբ, ինչպես նաև արտահայտված բացասական անձնային հատկություններով՝ կասկածամտություն, նկրտիզմ:

6. Շտկողական աշխատանքների արդյունավետությանը խոչընդոտում են հույզերի կառավարման դժվարությունները:

Հետազոտության փորձաքննությունը և տվյալների հուսալիությունը: Ստացված արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունն ապահովված են ընտրված մեթոդաբանական հիմքերով, օգտագործված մեթոդների օբյեկտիվությամբ և համարժեքությամբ, փորձարկվողների թվով, տվյալների քանակական և որակական վերլուծություններով: Հետազոտության արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ-ի Հոգեբանության ամբիոնի նիստերում: Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հրատարակվել է 11 հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, գրականության ցանկից (109 անուն): Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարադրանքով 164 տպագիր էջ, որտեղ ներառված են 13 գծապատկեր, 8 գծանկար, 17 աղյուսակ (վերջիններս տեղ են գտել հավելված 1-ինում): Ատենախոսությանը կցված է նաև 2 հավելված (64 էջ):

ԱՏԵՆԱՊՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են հիմնախնդրի աստիճանը, ներկայացված են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, նպատակից բխող հետազոտական խնդիրները, հետազոտության ընտրակազմը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ «**Բնավորության շեշտվածության հիմնախնդիրը հոգեբանության մեջ**» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին՝ «*Բնավորության գծերի դասակարգման մոտեցումները*» ենթագլխում ներկայացված են գիտական գրականության մեջ առկա բնավորության գծերի դասակարգման բազմաբնույթ մոտեցումները: Վերլուծության են ենթարկվում հոգեբանական գիտության մեջ ներկայացված անտիկ և ժամանակակից հիմնական հայեցակետերը բնավորության ուսումնասիրման և գծերի դասակարգման հիմնահարցերի վերաբերյալ: Երկրորդ «*Բնավորության շեշտվածության դրսևորման առանձնահատկությունները*» ենթագլխում բնավորության շեշտվածությունը դիտարկվում է որպես բնավորության աններդաշնակ զարգացում, նրա առանձին գծերի ուռճացված դրսևորում, որը որոշակի ազդեցությունների պարագայում նպաստում է անձնավորության բարձր խոցելիության ձևավորմանը և որոշակի իրավիճակներում դժվարացնում է հարմարման գործընթացը: Այս ենթագլխում վերլուծվում և մեկնաբանվում են բնավորության շեշտվածությունների դասակարգման և համակարգման բազմաթիվ ուսումնասիրություններ (Ա. Լիչկո, Վ. Լեոնհարդ, Վ. Վ. Պոնոմորենկո, Ի. Վ. Վիբոյշիկ, Ե. Ա. Ալեքսեևա, Լ. Պ. Պառոշուկովա, Պ. Վ. Վոլկով, Դ. Յա. Ռայգորոդսկի, Յու. Բ. Գիպպենբեյտեր և Վ. Յա. Ռոմանովա, Ա.Գ. Մակլակով, Ա. Ա. Ռեան, Ս. Բ. Կորկինա և այլք):

Այս ենթագլխում անդրադարձել ենք նաև բնավորության շեշտվածության տիպերի և անձնային հիմնական կառույցների (ինտելեկտ, ինքնագնահատական, ինքնակառավարում), ինչպես նաև մի շարք անձնային հատկությունների (շփվողականություն, մենակության հակվածություն, հաղորդակցման ընթացքում ինքնավերահսկողության գնահատում, ինքնուրույնություն, հուզականություն, ապրումակցում, կամքի ուժ, ռեֆլեքսիվություն, լիդերություն, կասկածամտություն, ագրեսիվություն, էսասիրություն, մարդասիրություն, ընկերասիրություն, ենթարկվողականություն, կախյալություն, կոնֆլիկտայնություն, նկրտիզմ, էքստրավերսիա, նորույթի նկատմամբ հակվածություն, հանդուրժողականություն, բարեխղճություն, աղապտիվություն) որոշակի փոխադասմանավորվածության խնդրին:

Աշխատանքի երկրորդ «*Բնավորության շեշտվածության տիպերի անհատական, անձնային հատկությունների և անձնային կառույցների հետազոտության արդյունքների վերլուծություն*» գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Այս գլխի «*Հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդներն ու դրանց ընտրությունը*» ենթագլխում ներկայացված են հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը,

ընտրակազմը, մեթոդներն ու մեթոդիկաները, դրանց ընտրության հիմնավորումը:

Հետազոտության կազմակերպման և արդյունքների վերլուծության ժամանակ հենվել ենք համակարգային ուսումնասիրություններին ներկայացված պահանջների վրա: Մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորված է եղել ընտրված մեթոդաբանական հիմքերով, ուսումնասիրման առարկայով, նպատակով, խնդիրներով: Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս հաշվի ենք առել հետևյալ չափանիշները. մեթոդի համարժեքությունն ուսումնասիրման օբյեկտին, խնդիրներին, վստահելիությունը, համապատասխանությունը գիտական հետազոտությունների ժամանակակից մակարդակին և հետազոտության տրամաբանական կառուցվածքին:

Հետազոտության արդյունքները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության համակարգչային SSPS ծրագրով:


Հետազոտվողների մոտ բնավորության շեշտված գծերի շտկման նպատակով կիրառվել է բնավորության շեշտվածություն ունեցող փորձարկվողների հոգեբանական վարժանք:

Երկրորդ *«Բնավորության շեշտվածության տիպերի և անձնային հատկությունների հետազոտության արդյունքների համահարաբերակցային ցուցանիշների հոգեբանական վերլուծություն»* ենթազվառում ներկայացված և վերլուծված են բնավորության շեշտվածության բունկվող, հոգեասթենիկ, շիզոիդ, հիստերոիդ, հիպերտիմ, դիստիմիկ, ցիկլոտիմիկ, էմոտիվ, խցանվող, պեղանտ, տագնապային, էկզալտացված տիպերի բազմաբնույթ համահարաբերակցային կապերը, ինչպես նաև ներկայացված են այդ կապերն արտացոլող գծապատկերները: Գրանցված տարատեսակ համահարաբերակցային կապերը բացատրվում են տիպերի ուրույն առանձնահատկություններով՝ շեշտադրելով յուրաքանչյուրի խոցելիության ոլորտը:

Հոգեասթենիկ տիպին բնորոշ են ինքնագնահատականի և ինքնակառավարման ցածր մակարդակները, ինտերնալությունը, կախյալությունը, ենթարկվողականությունը, խնդիրների լուծումից խուսափումը, կամքի ուժի և շփվողականության ցածր մակարդակը, նկրտիղմը, հուզական անկառավարելիությունը և դեզադապտիվությունը: Հոգեասթենիկի մոտ ինքնակառավարման բաղադրամասերից ցածր է արտահայտված որոշման ընդունումն ու հակադրությունների վերլուծությունը:

Գծապատկեր 1

Բնավորության շեշտվածության հոգեասթենիկ տիպի և անձնային կառույցների, հասկությունների համահարաբերակցային կապեր



n=47

$P \leq 0.01$, երբ $r = -0.354$ — $0,372$, ուժեղ դրական կապեր —————

$P \leq 0.05$, երբ $r = -0.273$ — $0,287$, միջին դրական կապեր —————

$P \leq 0.01$, երբ $r = -0.354$ — $-0,372$, ուժեղ բացասական —————

$P \leq 0.05$, երբ $r = -0.273$ — $-0,287$, միջին բացասական կապեր —————

Բնավորության շեշտվածության հոգեասթենիկ տիպի հիմքում ընկած են ինքնագնահատականի խիստ ցածր արտահայտվածությունը, կամքի թուլությունը, խնդիրների լուծումից խուսափումը, ենթարկվողականությունը, նրբոտիզմը,

հուզական անկառավարելիությունը և դեզադապտիվությունը (տե՛ս գծապատկեր 1):

Աշխատանքի երրորդ՝ «Բնավորության շեշտվածության ընդհանուր գործոններ ունեցող տիպերի և անձնային հատկությունների. կառույցների հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն խմբային աշխատանքներից առաջ և հետո» գլխի «Բնավորության շեշտվածություն ունեցող 18-20 տարեկան անձանց հոգեբանական վարժանքի վերլուծություն» ենթագլխում վերլուծված է բնավորության շեշտվածություն ունեցող փորձարկվողների հոգեբանական վարժանքը, ներկայացված են խմբային աշխատանքի նպատակը, խնդիրները, ոլորտները, անցկացման փուլերը: Պարզաբանված է նաև յուրաքանչյուր հանդիպման մեջ ներառված վարժանքների նպատակները, հիմնական սկզբունքները, իրականացման եղանակները:

Աշխատանքի երրորդ գլխի «Բնավորության շեշտվածություն ունեցող 18-20 տարեկան անձանց հոգեբանական վարժանքի արդյունքների համեմատական վերլուծություն խմբային աշխատանքներից առաջ և հետո» ենթագլխում ներկայացվում են և՛ ստուգիչ, և՛ փորձարարական խմբերում կատարված բնավորության շեշտվածության էմոտիվ, հոգեասթենիկ, պեդանտ և տագնապային տիպերի և անձնային հատկությունների արտահայտվածությունը ստուգող փորձերի արդյունքների համահարաբերակցական վերլուծությունը: Այդ գիտափորձերը նախորդել են բնավորության շեշտվածություն ունեցող 18-20 տարեկան անձանց հոգեբանական վարժանքին: Այնուհետև ներկայացվել են վարժանքից առաջ և հետո ստացված արդյունքների համեմատական վերլուծությունները:


Վարժանքները կատարվել են այն տիպերի հետ, որոնք անձնային և անհատական ընդհանուր հատկություններ ունեն:

Հոգեասթենիկների մոտ թուլացում է նկատվել փորձարարական (26 ուսանողից 7-ը, 27%-ով) և շատ քիչ՝ ստուգիչ (21 ուսանողից 3-ը, 14%-ով) խմբերում: Այս տիպի հետ բազմաբնույթ համահարաբերակցային կապեր ունեցող անձնային հատկություններում դրական փոփոխություններ են գրանցվել: Հոգեասթենիկի մոտ ցածր արտահայտվածություն ունեն շփվողականությունը, կամքը, ինքնագնահատականը, ինքնակառավարման համակարգի հակադրությունների վերլուծության բաղադրամասը, որոնք, սակայն, վարժանքի արդյունքում նկատելի դրական տեղաշարժ են ունեցել: Ինչպես նաև ենթարկվողականության ու կախյալության թուլացում է նկատվել, որոնք հոգեասթենիկի մոտ բարձր արտահայտվածություն ունեն:


Հոգեասթենիկի մոտ գրանցվել է բարձր արտահայտված դեզադապտիվություն, որի հետագա բացասական զարգացումը խմբային աշխատանքների շնորհիվ հնարավորինս կանխվել է: Փորձարարական խմբում այս հատկությունների թուլացումն ու լավացումը թույլ է տալիս ենթադրել, որ տևական աշխատանքների դեպքում բնավորության շեշտվածության այս տիպի մոտ ավելի մեծ փոփոխություններ կդրսևորվեն:

Խմբային աշխատանքներին ենթարկվել են ավելի շատ ձեռքբերովի հատկությունները: Ավելի նվազ փոփոխություններ են գրանցվել հույզերի կառավարման դժվարությունների դեպքում: Այն շեշտվածությունների մոտ, որոնք նմանատիպ դժվարություններ ունեն, վեցամսյա աշխատանքները բավարար չեն դրական արդյունք գրանցելու համար: Դա պայմանավորված է նաև հուզական ոլորտի անկառավարելիությամբ, ինքնակառավարման և ինքնավերահսկման ոլորտներում արտահայտված դժվարություններով:

Գծանկար 1



Հոգեասթենիկ տիպի արդյունքների ցուցանիշները փորձարարական խմբում՝ վարժանքից առաջ և հետո



Հոգեասթենիկ տիպի արդյունքների ցուցանիշները ստուգիչ խմբում՝ վարժանքից առաջ և հետո

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գիտական գրականության վերլուծությունից պարզ է դառնում.
 - 1.1. Բնավորության շեշտվածության ուսումնասիրությունները սակավաթիվ են և համակարգային բնույթ չեն կրում:
 - 1.2. Բնավորության շեշտվածությունը բացասական ազդեցություն ունի հաղորդակցման, միջանձնային հարաբերությունների ձևավորման և գործունեության արդյունավետության վրա:
2. Բնավորության շեշտվածության յուրաքանչյուր տիպի հիմքում ընկած են նյարդային համակարգի հատկությունների, անձնային հիմնական կառույցների և հատկությունների որոշակի համադրություն.
- Բռնկվող տիպ - նյարդային համակարգի անհավասարակշռություն և գերշարժունություն, ակտիվություն, ցածր ինքնավերահսկողություն, ագրեսիվություն, կասկածամտություն, հուզական անկառավարելիություն, դեզադապտիվություն, ինքնավերահսկման, շտկման և որակի գնահատման ցածր արտահայտվածություն:

Հոգեապթենիկ տիպ - կամքի թուլություն, ինքնագնահատականի խիստ ցածր մակարդակ, խնդիրների լուծումից խուսափում, ենթարկվողականություն, ներտոհիզմ, հուզական անկառավարելիություն, դեգադապտիվություն, կանխատեսման թույլ արտահայտվածություն, որոշման ընդունման և հակադրությունների վերլուծության խիստ ցածր արտահայտվածություն:

Շիզոիդ տիպի - շփվողականության ցածր մակարդակ, խնդիրների լուծումից խուսափում, հուզական անկառավարելիություն, դեգադապտիվություն, որոշման ընդունման ցածր մակարդակ:

Հիստերոիդ տիպ - նյարդային համակարգի անհավասարակշռություն ու շարժունություն, ակտիվություն, էքստրավերսիա, մրցակցության հակվածություն, ինքնավերահիշման և շտկման ցածր արտահայտվածություն:

Հիպերտիմ տիպ - նյարդային համակարգի շարժունություն, ակտիվություն, էքստրավերսիա, շփվողականություն և իշխանականություն, կանխատեսման և պլանավորման թույլ արտահայտվածություն:

Դիստիմիկ տիպ - շփվողականության ցածր մակարդակ, հուզական անկառավարելիություն, դեգադապտիվություն, որոշման ընդունման, որակի գնահատման և շտկման ցածր արտահայտվածություն:

Ցիկլոտիմիկ տիպ - նյարդային համակարգի անհավասարակշռություն, դեգադապտիվություն, ինքնավերահիշման և որակի գնահատման ցածր մակարդակ:

Էմոտիվ տիպ - հուզականություն, ներտոհիզմի բարձր արտահայտվածություն, վերլուծության գործընթացի ցածր արտահայտվածություն:

Խցանվող տիպ - անհանդուրժողականություն, կասկածամտություն, հույզերի պաթոլոգիկ կայունություն, որոշման ընդունման և որակի գնահատման թույլ արտահայտվածություն:

Պեդանտ տիպ - կասկածամտություն, պլանավորման և որակի գնահատման թույլ արտահայտվածություն:

Տագնապային տիպ - ինտելեկտի խիստ ցածր արտահայտվածություն, հուզական անկառավարելիություն, պլանավորման թույլ արտահայտվածություն:

Էկզալտացված տիպ - նյարդային համակարգի անհավասարակշռություն, մրցակցության հակվածություն, որակի գնահատման ցածր արտահայտվածություն:

3. Բնավորության շեշտվածության տիպերի հիմքում, հիմնականում, ընկած են հուզական ինքնակառավարման դժվարություններ, որոնք խոչընդոտում են այդ տիպերի շտկման գործընթացին:

4. Հուզական անկառավարելիության պայմաններում իջնում է ինքնակառավարման տարբեր բաղադրամասերի արդյունավետությունը, ինչն այդ տիպերից մեծ մասի մոտ հանգեցնում է դեգադայատիվության:

Շեշտված տիպերին առավել բնորոշ են նյարդային համակարգի անհավասարակշռությունը, ներոտիզմը, կասկածամտությունը և ագրեսիվությունը:

Այսպիսով, տիպերի շեշտվածության հիմքում ընկած առավել կարևոր գործոններն են նյարդային համակարգի անհավասարակշռությունը, ներոտիզմը: Այս գործոնների ազդեցության պայմաններում առաջանում են հուզական անկառավարելիություն, կասկածամտություն և ագրեսիվություն, որոնք բացասաբար են ազդում ինքնակառավարման առանձին բաղադրամասերի արդյունավետության վրա, ինքնակառավարման ընդհանուր մակարդակն իջնում է, ինչը հանգեցնում է դեգադայատիվության:

5. Բնավորության շեշտվածության էմոտիվ, հոգեապթենիկ և տագնապային տիպերը, որոնց մոտ առկա են դրական փոփոխությունների ենթակա անձնային հատկություններ, կարճատև վերականգնողական խմբային աշխատանքների արդյունքում որոշակի դրական փոփոխություններ են կրում:

6. Բնավորության շեշտվածության պեղանտ տիպի մոտ փոփոխություններ չի գրանցվել: Նրա մոտ խիստ արտահայտված է ոչ միայն նյարդային համակարգի անհավասարակշռությունը և հուզական անկառավարելիությունը, այլև կասկածամտություն, ներոտիզմ անձնային հատկությունները, որոնք նպաստում են այդ տիպերի կարծրացմանը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի կողմից հրատարակած աշխատանքներում:

1. Ղազարյան Ա. Հ. Անձնային գծերի դասակարգման հարցի շուրջ, Խ. Աբովյանի 200-ամյակին նվիրված 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու: «Մանկավարժ» հրատ., Երևան, 2010 թ., էջ 208-210:

2. Ղազարյան Ա. Հ., Շահինյան Զ. Բ. Հոգեկան լարվածության պայմաններում ինքնակառավարման առանձնահատկությունները

բնավորության շեշտվածություն ունեցող պատանիների մոտ, Հոգեբանությունը և կյանքը, N 1-2, ԶԱՆԳԱԿ հրատ., 2011 թ., էջ 45-49:

3. Ղազարյան Ա. Հ. Բնավորության շեշտվածություն ունեցող անձանց կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության առանձնահատկությունները, Հոգեբանությունը և կյանքը, N 3-4, ԶԱՆԳԱԿ հրատ., 2011 թ., էջ 46-51:

4. Ղազարյան Ա. Հ., Ժամկոցյան Ռ. Ս., Բնավորության շեշտվածության և պաշտպանական մեխանիզմների փոխհարաբերության առանձնահատկությունները, Գիտական հոդվածներ, Մանկավարժություն և մեթոդիկա, Վանաձոր, «ՄԻՄ տպագրատուն», 2012թ., էջ 98-107:

5. Ղազարյան Ա. Հ. Արժեքային համակարգի դրսևորման առանձնահատկությունները բնավորության շեշտվածություն ունեցող պատանիների մոտ, «Հասարակություն, ընտանիք, դեռահաս արդիական խնդիրներ Հայաստանում և սփյուռքում» միջազգային գիտա-գործնական համաժողովի նյութեր, Երևան, 2012թ., էջ 98-101:

6. Ղազարյան Ա. Հ. Բնավորության շեշտվածություն ունեցող պատանիների անձնային որոշ հատկությունների դրսևորման առանձնահատկությունները, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողով, Երևան, «ՄԱՆԿԱՎԱՐԺ» հրատ., 2013 թ., էջ 35-38:

7. Ղազարյան Ա. Հ. Բնավորության շեշտվածության տիպերի և անձնային հատկությունների փոխհարաբերությունները, Երևանի պետական համալսարան, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները», IV-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, Էդիթ Պրինտ հրատ., 2013 թ., էջ 130-131:

8. Ղազարյան Ա. Հ., Փիլոսոփայան Ս. Մ. Բնավորության շեշտվածություն ունեցող դեռահասների ինքնակառավարման առանձնահատկությունները, «Դպրոցական հոգեբանության ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, Երևան, «Գրիգոր Տաթևացի» հրատ., 2014 թ., էջ 189-194:

9. Ղազարյան Ա. Հ. Բնավորության շեշտվածության տիպերի և անձի հինգ-գործոնային մոդելում առանձնացված հատկությունների փոխհարաբերությունները, Այլընտրանք գիտական հանդես, 2016 N 3, հուլիս – սեպտեմբեր, էջ 103-108:

10. Ղազարյան Ա. Հ., Բնավորության շեշտվածություն ունեցող պատանիների նյարդային համակարգի և որոշ անձնային հատկությունների փոխհարաբերության

առանձնահատկությունները, Այլընտրանք գիտական հանդես, 2016 N 3, հուլիս - սեպտեմբեր, էջ 109-113:

11. Ղազարյան Ա. Ն. Բնավորության շեշտվածություն ունեցող անձանց շփվողականության առանձնահատկությունները, Բանբեր: Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի «Լինգվա» հրատարակչություն, Երևան, 2016թ., էջ 252-261:

КАЗАРЯН АРМИНЕ АРУТЮНОВНА
ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ВЛИЯЮЩИЕ НА
ФОРМИРОВАНИЕ АКЦЕНТУАЦИИ ХАРАКТЕРА

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – Общая психология, Теория и история психологии, Психология личности.

Защита диссертации состоится 21-ого мая, 2019 года в 12:00 на заседании специализированного совета Психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Современный этап развития общества характеризуется изменениями различного рода. В таких условиях черты характера личности имеют существенное влияние в целом на форму деятельности данной личности и на вид проявления межличностных взаимоотношений. Играя ключевую роль в личностных проявлениях, отличительные и наиболее выделенные черты характера могут изменить весь психологический портрет личности. Иногда они даже могут выступать причинами и основой формирования отклоняющегося поведения и неких расстройств личности, особенно в развитии психопатии. В научных источниках нет исследований касаясь основных факторов формирования акцентуируемых черт характера у личности, а именно относительно структуры личности, индивидуальных и личностных особенностей. Выявление зависимости между ними и их взаимосвязи даст возможность проявить основные факторы, порождающие те или иные акцентуации характера, и разработать пути их регулирования.

Объект исследования является акцентуация характера.

Предметом исследования являются факторы, влияющие на формирование акцентуации характера.

Целью исследования является выявление и раскрытие факторов, влияющих на формирование акцентуаций характера.

Гипотеза исследования предполагает, что:

1. В основу акцентуации характера лежат неуравновешенная нервная система и некоторые личностные черты (подозрительность, агрессивность, эгоизм, подчиненность и податливость, зависимость, лидерство, склонность к конкуренции).

2. Во всех типах акцентуации характера существуют составляющие самоуправления и личностных свойств, подверженные одному или более негативным изменениям.

Задачи исследования:

1. Исследовать теоретические и методические подходы касаясь данной проблемы в научной литературе.
2. Изучить взаимосвязь между типом нервной системы и акцентуацией характера.
3. Изучить взаимовлияние акцентуации характера и личностных структур.
4. Выявить особенности взаимовлияния акцентуации характера и личностных свойств.
5. Определить свойственные типам акцентуации характера особенности самоуправления.
6. Определить факторы, влияющие на формирование акцентуации характера.

Научная новизна исследования. Проводилось системное исследование акцентуации характера, личностных структур, индивидуальных и личностных особенностей. Были определены факторы, на которых базируется каждый тип.

Теоретическое значение исследования. В результате научно-исследовательских работ, имеющих системный подход, предоставляется возможность расширения знаний о психологических факторах акцентуации характера, а именно о тех индивидуальных и личностных особенностях, взаимовлияние которых приводит к акцентуации характера.

Практическое значение исследования. Результаты и выводы данной научно-исследовательской работы могут быть применены в рамках таких дисциплин и учебных программ, как “Общая психология”, “Психология личности” и “Возрастная психология”. Предлагаемая нами программа “Психологическое обучение людей в возрасте 18-20 лет, имеющих акцентуацию характера” может применяться с целью корректирования некоторых видов акцентуаций характера у людей в юном возрасте.

Экспертиза исследования и надежность данных. Надежность и точность полученных данных обеспечена за счет выбранных методических основ, объективностью и равноценностью использованных методов, количеством тестируемых, количественным и качественным анализом данных. Результаты исследования регулярно обсуждались на заседаниях кафедры общей психологии Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна.

Структура и объем диссертации. Диссертация состоит из введения, трех глав, практических рекомендаций и списка литературы (109 авторов). Объем диссертационной работы составляет 164 страниц по компьютерному изложению, включая 13 графических фигур, 8 графических изображений, 17 таблиц. К диссертационной работе также прикреплены 2 Предложения (64 страниц).

GHAZARYAN ARMINE HARUTYUN
PSYCHOLOGICAL FACTORS PROMOTING THE FORMATION OF
TRAIT EMPHASIS

Dissertation for the degree of candidate of psychological sciences in specialty 19.00.01 - General Psychology, Theory and History of Psychology, Psychology of Personality.

The defense of the thesis will take place on at 12:00 PM, May 21, 2019, at the meeting of the Special Board of Psychology 064 HAS awarding degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Address: Yerevan 0010, Tigran Mets ave., 17.

SUMMARY

The modernity of the research: The modern phase of the development of society is described with the variety of changes. In these conditions the traits of individual's character change the general overview of the individual's activity and the forms of display of human interaction. Having a key role in personality manifestation the emphasized traits of character can change the whole overview of the person, and sometimes be a basis for the various forms of point behaviour and some personal disorder, especially the development of psychopathy. In none of the examined academic sources the correlation of the most important factors (person's structure, individual and personal features) on the basis of any type of emphasis has been studied. The revelation of their interaction and more noticeable connections will provide opportunity to find out the factors underlying on the basis of types of trait emphasis and develop the ways for their regulation.

The object of the research is the trait emphasis.

The subject of the study are the psychological factors promoting the formation of trait emphasis.

The purpose of the study is the revelation of the psychological factors promoting the formation of trait emphasis.

The hypothesis of the research: it is supposed that:

1. on the basis of the trait emphasis lie unbalanced nervous system and suspicion, aggressiveness, egoism, submissiveness, dependence, leadership, personal features of competition tendency.

2. All the types of trait emphasis have one or several modified parts and personal features of self-control.

For the realization of the aim of research the following *issues* have been raised:

1. to study theoretical and methodological approaches regarding the issue in the academic literature.
2. To study the interdependence of the type of nervous system and trait emphasis.
3. To study the interaction of trait emphasis and person's structures.
4. To raise the characteristics of interaction of trait emphasis and person's features.
5. To find out the self-control features typical to trait emphasis types.
6. To reveal the factors promoting the formation of trait emphasis.

The scientific novelty of the research. A complex research of the trait emphasis, individual, personal features and person's structures has been carried out.

The theoretical significance of the research. The results of the complex scientific-experimental study can enlarge the scope of knowledge on the psychological factors of trait emphasis, i.e those individual and personal features, which interaction causes trait emphasis. The data received during the research can expand the scope of trait theory.

The practical significance of the research. The results and conclusions of the scientific-experimental research can be used in the plans and educational materials of the subjects "General Psychology", "Personality Psychology" and "Developmental Psychology". The program suggested by us on "Psychological exercise of people with trait emphasis of the age 18-20" can be used for the purpose of correcting some types of teenagers' trait emphasis.

The expertise of the research and the data availability. The trustworthiness and reliability of the received results are assured by chosen methodological grounds, objectivity and equivalence of the used methods, number of experimented people, quantitative and qualitative analysis of data. The results of the research were periodically discussed in the sessions of Chair of Psychology, ASPU after Kh. Abovyan.

The structure and the size of the dissertation. The dissertation consists of introduction, three chapters, conclusions, practical suggestions, bibliography (109). The size of dissertation is 164 printed pages on computer, which includes 13 charts, 8 drawings, 17 tables. Also 2 appendixes (64 pages) are attached to the dissertation.

